«Lragir.am» լ/կ, Ռոզա Հովհաննիսյան – Պարոն վարչապետ, փաստացի ստացվում է, որ դեռևս 45 տոկոսն է ներդրումների իրագործվել, ընդ որում՝ դրանում ներգրավված են նաև հարկային միջոցների, որքան որ մենք հասկանում ենք, հարցադրում է հնչում՝ այս փուլում որքանո՞վ է ճիշտ վարկը ներկայացնել որպես ներդրում և ինչ 1 մլրդ հնարավորության մասին խոսեց Սերժ Սարգսյանը երեկ տված հարցազրույցում:

Վարչապետ Կարեն Կարապետյան –Ներդրումային ծրագրերը կարող են լինել վարկային, և այդ իսկ պատճառով մենք ներդրումային ծրագրերը ներդրումներից տարանջատում ենք: 45 տոկոսը 8 ամսվա ցուցանիշն է, այսօր՝ նոյեմբերի 2-ն է, և վստահ եղեք, որ մենք ձեզ մինչև տարվա վերջ հաշվետվություն կտանք այդ առումով: Նախագահը 1 մլրդ-ի մասին ներկայացնելիս նկատի ուներ ներդրողների ակումբը, որը ժամանակին ստեղծել ենք: Բոլոր ներդրումներն իրենք մոտ ժամանակներս ձեզ հստակ կհայտարարեն, նույնիսկ այս 10-12 օրվա մեջ:

«Tert.am» լ/կ, Լիանա Առաքելյան - Երբ նոր էիք պաշտոնն ստանձնում, նշեցիք, որ տնտեսության վիճակը չափազանց ծանր է: Ուզում եմ արձանագրեք, հիմա ինչպիսի տնտեսություն ունենք՝ հաշվի առնելով, որ բնակչության վիճակը ծանրացել է, քանի որ առկա է գնաճ:

Վարչապետ Կարեն Կարապետյան– Ձեր հարցի մեջ կան պնդումներ: Այո, այդպես եմ գնահատել, այսօր ես գնահատում եմ մեր վիճակը կառավարելի և հեռանկարային: Ես չեմ ասում, որ մենք բոլոր խնդիրները լուծել ենք, ընդհանրապես, մի քիչ շեղվեմ, հետո ձեր հարցին կպատասխանեմ: Այսօր մեր տնտեսության ինչ հիմնական խնդիրներ ենք մենք մեր առջև դրել: Օտարերկրյա ներդրողին բերելու համար մենք նախևառաջ պետք է ստեղծենք միջավայր, և չափազանց կարևոր է ակտիվացնենք մեր սեփական ներքին ներդրողին: Այս տարվա իմ գնահատականն այն է, որ այդ առումով որոշակի ձևով ֆոնը փոխել ենք: Ժողովրդի վիճակը չի լավացել, քանի որ կենսաթոշակ և աշխատավարձ չենք բարձրացրել, դա այդպես չի: Բազմաթիվ երկրներ կան, որոնք տարիների ընթացքում մինիմալ կենսաթոշակը կամ աշխատավարձը չեն բարձրացնում, բայց դա չի նշանակում, որ միջին եկամուտները չեն աճում: Եվ ես ձեզ տվեցի սոցիալական վիճակագրություն դրա մասին: Ինչ վերաբերում է գնաճին, ապա այդ տարվա կտրվածքով 452 ապրանքով են որոշում գնաճը, մի մասն աճել է, մի մասը՝ ոչ, տարվա ընթացքում մեր կանխատեսումը 0.6-0.8 տոկոս է: Եվ այդ իսկ պատճառով ես համաձայն չեմ ձեզ հետ, որ այս տարվա մեջ միջին սոցիալական վիճակը մեր քաղաքացու վատացել է:

«Կենտրոն» հ/ը, Գրիգոր Գևորգյան – Պարոն վարչապետ, 2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտնելու Հարկային նոր օրենսգիրքը, ինչն իրենից ենթադրում է մի շարք ապրանքների թանկացում, այդ թվում՝ սեղմված գազի թանկացում: Կառավարությունը մեխանիզմներ մշակե՞լ է, օրինակ, որ տրանսպորտի սակագինը չբարձրանա:

Վարչապետ Կարեն Կարապետյան– Ճիշտն ասած՝ սեղմված գազի թանկացում ենթադրվում է, թե չէ, ես չգիտեմ, բարձրանու՞մ է, ինչքա՞ն է բարձրանում: Մրցակցային

Հեռախոս/ Ֆաքս՝(374 10) 52-87-12,
Phone/Fax: (374 10) 52-87-12
Էլ.փոստ՝ press@gov.am
Կայքէջ՝ www.gov.am

դաշտ է, ընդհանրապես տեսեք, Հարկային, մաքսային օրենսգիրքը մենք անցած տարի հոկտեմբերին, երբ որ ընդունել ենք, չենք թաքցրել, որ կան կետեր, որոնք մենք գրել ենք, քանի որ խնդիր ունեինք մեր արտաքին պարտքը սպասարկելու և մեր գործընկերների հետ խոսելու ժամանակ, երբ որ ասում էինք, ստվերից գումար ենք բերելու և այլն, դա բավարար չէ, ասում են այն բազան, որը դուք հարկում եք, այդ բազայի վրա ցույց տվեք, որտեղից է գումարը գալու: Հարկային, մաքսային օրենսգիրքն ընդունված է, ինքն իրավունք ունի ապրելու և եթե հիշում եք, մենք այս տարվա ապրիլին մեր մուտքերն ավելացրեցինք, որով որոշակի վստահություն ձեռք բերեցինք մեր գործընկերների նկատմամբ: Ես ձեզ ցույց տվեցի, որ 2016-18թթ. մեր հարկերի մուտքը 15.1 տոկոսով աճել է: Ինչ վերաբերում է այս Հարկային, մաքսային օրենսգրքից ելնելով, թե ինչ հետևանքներ, ինչ գնային քաղաքականություն կլինի, երբ որ լինի, այն ժամանակ էլ կարձագանքենք:

«Գոլոս Արմենիի», Լիանա Գյոզալյան – Պարոն վարչապետ, մեկ տարի առաջ դուք խոսեցիք անարդյունավետ սեփականատերերի մասին, այդ թվում՝ այդ արդյունաբերական գործարանների մասին և խոստացաք, որ լուծումներ կտաք, որոնք ընդունելի կլինեն բոլոր կողմերին: Ի՞նչ է արվել այդ ուղղությամբ և արդյո՞ք ուշ չէ խոսել այդ գործարանների վերաթողարկման մասին, երբ որ մեծ մասն արդեն թալանված է և ոչ պիտանի օգտագործման համար:

Վարչապետ Կարեն Կարապետյան– Մենք չենք ասել, որ բոլոր գործարանները վերականգնելու ենք: Իրականում եթե այդ գործարանների սեփականատերերը գալիս են և մեզ ներկայացնում են առողջացման ծրագիր և կառավարության կողմից որոշակի աջակցություն են ակնկալում, այդ թվում՝ համապատասխան վարկային միջոցների, ու մենք մանրամասն նայում ենք: Որ ասենք մեծ ալիք է բարձրացել՝ չէ: Մենք ունենք հաջող օրինակներ, բացի դրանից, մենք պայմանավորվել ենք բանկերի հետ, որովհետև բազմաթիվ ակտիվներ կան, որոնք բանկերում են, չեն աշխատում և, ճիշտն ասած, ակնկալում էինք բանկերի կողմից ավելի մեծ ակտիվություն, որ այս պահին չենք նկատում, երբ որ մենք ասել ենք՝ այդ ակտիվը կորելու է ձեզ մոտ: Առաջարկում ենք՝ դուք էլ շարժվեք, մենք էլ շարժվենք, որոշակի միջոցներ տրամադրենք, մենք նույնպես կառավարիչներ համատեղ մասնակցենք և, կարծում եմ, մենք կամաց-կամաց հասնում ենք այն կետին, որ կունենանք կիրառական արդյունքներ:

«Araratnews.am», Փայլակ Ֆահրադյան –Պարոն վարչապետ, վերջերս շատ է քննարկվում այն հարցը, որ Ձեր և Սերժ Սարգսյանի միջև ձեռք է բերվել համաձայնություն, համաձայն որի Դուք համաձայնել եք հաջորդ տարի լինել փոխվարչապետ և դրան զուգահեռ՝ նաև արդյո՞ք համակարծիք եք Հանրապետականների այն պնդումներին, որ որպես ՀՀԿ նախագահ և Հայաստանի անվտանգության թիվ մեկ երաշխավոր Սերժ Սարգսյանն անփոփոխարինելի է, շնորհակալություն:

Վարչապետ Կարեն Կարապետյան - Այդ հարցին բազմաթիվ անգամ պատասխանել եմ: Այսօրվա մեր իրավիճակում ապրիլից հետո Հայաստանի Հանրապետական կուսակցությունն առաջարկելու է վարչապետի թեկնածու իր կոալիցիոն գործընկերոջ հետ համատեղ: Նման քննարկումներ մենք չենք ունեցել: Այդ իսկ պատճառով որևիցե պայմանավորվածության մասին խոսելն ուղղակի ապարդյուն է: Ինչ վերաբերում է Սերժ Սարգսյանի՝ Հայաստանի Հանրապետության նախագահի վարկանիշներին և հատկանիշներին՝ որպես անվտանգության երաշխավոր, որպես մեծ փորձ ունեցող ղեկավար, ես այդ պնդումների հետ լիարժեք համաձայն եմ: Մնացած մասնավոր կարծիքների վերաբերյալ հարցրեք իրենցից:

«Ա1+», Միհեր Արշակյան – Անցյալ տարվա սեպտեմբերի 14-ին, պետք է նույնությամբ հիշեցնեմ Լիանայի խոսքը, ասեցիք, որ մեր տնտեսությունը չափազանց ծանր վիճակում

է: Դուք աչքի եք ընկնում լակոնիկ խոսքով, և ես պետք է օգտվեմ այդ իրավիճակից, ուզում եմ ձեզ հարցնել, Դուք ո՞ւմից ժառանգեցիք այդ տնտեսությունը:

Վարչապետ Կարեն Կարապետյան - Տեսեք, կուսակցությունը կարող էր ուրիշից ժառանգել, կարող էր ուրիշից չժառանգել, և այդ իրավիճակը լիներ էպսիմում ճշտությամբ փոփոխվող: Մենք, եթե նկատել եք, 2018թ. բյուջեի մեջ շատ կտրուկ բարձրացրել ենք կապիտալ ծախսերի մասը և վստահ ենք, որպեսզի մենք ունենանք կայուն զարգացման տենդենց, որոշակի քայլեր պետք է անենք: Ճգնաժամային վիճակը, արտաքին շուկաներից ազդեցությունները, որոնք եղել են մեր տնտեսության վրա, լավ կյանքից չի եղել:

Միեր – Ներողություն, պարոն վարչապետ, իմ հարցը այդ մասին չի: Դուք ո՞ր կուսակցությունից եք ժառանգել այդ տնտեսությունը:

Դուք ասացիք, որ չափազանց ծանր է, և այդ տնտեսությունը ժառանգեցիք Հանրապետական կուսակցությունից, ճի՞շտ է, և Դուք անդամակցեցիք Հանրապետական կուսակցությանը, որը բոլոր ընտրություններում, համենայն դեպս, հաղթել է, և ոչ մի հաղթանակ, համենայնդեպս, լեգիտիմ չի ճանաչվել: Դուք ինչպե՞ս անդամակցեցիք մի կուսակցության, որը տնտեսությունը հասցրել էր ծայրահեղ ծանր վիճակի:

Վարչապետ Կարեն Կարապետյան – Շատ լավ: Դա ձեր անձնական կարծիքն է: Շատ համարձակ եմ անդամակցել Հայաստանի Հանրապետական կուսակցությանը, շատ գիտակցաբար, և ժամանակին բացատրել եմ, ինչի եմ դա անում, որովհետև այն մարտահրավերները և տարածաշրջանը, պրոբլեմները, որի առաջ մեր երկիրը կանգնած է, չափազանց կարևոր է, որպեսզի մենք ցնցումներ չունենանք: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետական կուսակցությունը հասել է այդ կետին Ձեր ձևակերպմամբ, ապա իսկ ո՞վ է գնահատել, եթե այլ կուսակցություն լիներ, այդ տնտեսական անկման պարագայում իրենք ինչի կհասցնեին:

«Մեդիամաքս», Մարի Թարյան – Պարոն վարչապետ, հարցս վերաբերում է պետական համակարգում երիտասարդ, խելացի, տաղանդավոր կադրեր ներգրավվելուն: Այս խնդիրը երկու կողմ ունի, առաջինն այն է, որ վարձատրությունը ցածր է և մասնավորի հետ համեմատ մրցունակ չէ, և մյուս հարցը քաղծառայողի համակարգին է վերաբերում: Եթե, օրինակ, արտերկրից ինչ-որ երիտասարդ կադր ցանկանա գալ՝ այստեղ աշխատել, պետք է անցնի տևական գործընթաց քաղծառայող համարվելու համար: Արդյո՞ք պատրաստվում եք որոշակի քայլեր ձեռնարկել համակարգը ճկունացնելու և երիտասարդների համակարգում ավելի հեշտությամբ ներգրավելու համար:

Վարչապետ Կարեն Կարապետյան – Չափազանց սրտիցս եք խոսում: Այո, մենք պատրաստվում ենք Քաղաքացիական ծառայողի օրենքի փոփոխություն: Մենք իրականում խնդիր ունենք լավ երիտասարդ, և ոչ միայն երիտասարդ կադրեր ներգրավելու առումով և այդտեղ նախատեսում ենք փոփոխություններ: Արդեն շրջանառվում է համապատասխան օրենքը:

«Ազատություն» ռ/կ, Սարգիս Հարությունյան – Ձեր թույլտվությամբ, իմ գործընկեր Փայլակ Ֆահրադյանի հարցը կշարունակեմ: Ես ուզում եմ Ձեր կարծիքն իմանալ, Ձեր նպատակները: Դուք ասացիք, որ իշխող ուժի ներսում նման քննարկումներ չեն եղել վարչապետի հետ կապված: Դուք այս հարցին հունվարյան ասուլիսին անդրադարձաք, բայց բավական ժամանակ է անցել, և շատ գետեր են հոսել: Դուք ի՞նչ նպատակ ունեք՝ Դուք ցանկանում եք 2018 թ. ապրիլից հետո մնալ վարչապետի պաշտոնին, թե՞ կարծում եք, օրինակ, Վիգեն Սարգսյանն ավելի հաջող թեկնածու է, կամ կա՞ն այլ թեկնածուներ: Դուք ի՞նչ նպատակներ ունեք, խնդրում եմ ներկայացրեք:

Վարչապետ Կարեն Կարապետյան- Սարգիս, եկեք ես մի անգամ վերջնական պատասխանեմ: Ես հստակ հայտարարել եմ, որ պատրաստ եմ, ճի՞շտ է, հիշո՞ւմ եք: Իմ

աշխատանքը շարունակում եմ՝ ինչքան որ կարողություն ունեմ այդ աշխատանքին տրամադրելով: Ի՞նչ եմ ուզում անել, կարող է մի քիչ ամպագոռգոռ հնչի, դրա համար նախապես ներողություն եմ խնդրում, որովհետև առանձնապես շատ, կարծում եմ, նման բառապաշար չեմ օգտագործում, ծառայել մեր երկրին: Եվ ես վստահ եմ, որ մենք հաստատ կարող ենք լավ երկիր ունենալ՝ տրամաբանական, զարգացող: Ինչպիսի որոշում կկայացնի Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, շատ պարզ ձևակերպված է. մենք նոր Սահմանադրություն ենք ընդունել, նոր կարգավիճակի ենք անցնում, որտեղ հստակ ձևակերպված է, թե ինչպես դա կլինի: Այդ իսկ պատճառով, հարգելի լրագրողներ, գործընկերներ, այս հարցի վերաբերյալ եթե լրացուցիչ հարց տալու եք, չեմ պատասխանելու:

«Արմենիա Թիվի» հ/ը, Լիլիթ Ասլանյան - Փորձեմ շարունակել Միերի հարցը: Ձեր մեկ տարի առաջ հայտարարությունից հետո Դուք նաև ասացիք, որ սիգնալներ, ազդակներ եք հաղորդելու, թե որ ուղղությամբ է շարժվելու տնտեսությունը և նաև ներկայացնելու եք տնտեսության թույլ և ուժեղ կողմերը: Հիմա Ձեր ներկայացրած ցուցանիշները նայում եմ. տնտեսական ակտիվության ցուցանիշը 5.1 տոկոս ավելացել է, բայց տնտեսությունը, ինչպես կար, այնպես էլ արդյունաբերության և առևտրի շրջանառության հաշվին է առաջ գնում: Իսկ շինարարության ծավալներն արդեն քանի տարի է՝ անկում են ապրում, չնայած մենք տեսնում ենք, որ կարծես թե շինարարությունն էլ է, այսինքն՝ ինչ-որ օբյեկտներ կառուցվում են: Ձեր խոսքն էլ գիտեմ՝ կախարդական փայտիկ չկա, չունենք, այդուհանդերձ, խնդրեմ մեկնաբանեք:

Վարչապետ Կարեն Կարապետյան – Ասեմ: Շինարարության մեջ սեպտեմբերը սեպտեմբերի նկատմամբ ունենք 101.3 տոկոս աճ: Մենք, ճիշտն ասած, կանխատեսում ենք, որ այս տարի կունենանք նույն ցուցանիշները, ինչ որ 2016 թվականին: Խնդրում եմ ուշադիր լինեք, կանխատեսում ենք, գուցե ավելին լինի: 2018 թվականին ունենալու ենք միանշանակ աճ, որովհետև այն ազդակները, որն ստանում ենք սպառման աճը, պահանջարկի աճը, նաև՝ շինթույլտվությունների տրամադրման վիճակագրական տվյալները, նաև մեր կապիտալ ծախսերը, նաև այն ներդրումները, որոնք կատարվելու են շինարարության մեջ, մեզ հուշում են, որ 2018 թվականին մենք կունենանք 2017 թվականի նկատմամբ աճ: Եվ կարծում եմ, որ 2016 կամ 2017 թվականը կլինի մեր շինարարության ներքին կետը: Ինչ վերաբերում է գյուղատնտեսությանը, ապա մենք կանխատեսել էինք, եթե չեմ սխալվում, 4 տոկոսի աճ հաջորդ տարի: Էլի մի հայտարարություն անեմ, որի համար հետո վերջում պատասխան կտամ. եթե որևիցե բնակլիմայական և այլ արտառոց վիճակներ չլինեն, ես համարյա վստահ եմ, որ մեր գյուղատնտեսության աճը կլինի 4 տոկոսից շատ ավելի:

«Հայկական ժամանակ» օրաթերթ, Հայկ Գևորգյան- Պարոն վարչապետ, վիճակագրական թվերը լավն են, բայց ես այսպիսի մի բան ունեմ. Դուք ասում եք՝ 2017 թվականին արտաքին կոնյուկտուրան շատ լավն է եղել՝ պղնձի գներն աճել են, տրանսֆերտներն աճել են, Ռուսաստանում գնողունակությունն աճել է, դրա հաշվին մեր ապրանքների արտահանումը Ռուսաստան մի քիչ աճել է որոշ դեպքերում, որոշ դեպքերում նվազել է: Հետո որ ասում եք՝ մեքենաների ներկրումը 2 անգամ շատացել է, կարող է և դա պայմանավորված է ԵՏՄ պայմանագրով. բերում են, պահեստամաս են սարքում, տանում են Ռուսաստան, օրինակ, հնարավոր է, չգիտեմ, չունենք նման վիճակագրություն: Հետո անշարժ գույքի գործարքները շատացել են, բայց դրան զուգահեռ գինն է իջել, այսինքն՝ գնի նվազեցման հաշվին է, որ այդպես է: Երկարատև օգտագործման ապրանքների աճը. բոլոր այդ ոլորտին առնչվող մարդկանց հետ խոսելուց ուղղակի ստվերից են դուրս եկել. առաջ սառնարանը բերվում էր, ձևակերպվում էր որպես կարտոֆիլ, հիմա սառնարան է ձևակերպվում: Ու դրա հաշվին է աճը: Մտավախություն չունե՞ք, որ հենց

վիճակագրական աճերը, որ կան, զուտ գործնականում էֆեկտը շատ ավելի ցածր է, քան կարող է թվալ առաջին հայացքից:

Վարչապետ Կարեն Կարապետյան –Մտավախություն չունեմ: Մենք տնտեսական աճ ունենք, ճիշտ ես ասում, ընդհանուր տենդենցը դրական է, բայց մենք մանրամասն բաժանված ձեզ ներկայացնում ենք՝ ինչքան է մետաղի գների աճով պայմանավորված, ինչքան է առևտրի աճը, ինչքան է ծառայության աճը և այլն: Ինչ վերաբերում է վիճակագրությանը՝ մեքենաների աճ և այլ ապրանքների աճ, ես չեմ բացառում, որ կարող են այնտեղ ճշտումներ լինել, բայց մենք ունենք այլ ինդիկատորներ, որ ցույց են տալիս, որ եթե նույնիսկ ճշտումների խնդիր չառաջանար, ապա այդ ապրանքների մուտքն աճել է: Եվ եթե նույնիսկ միակ դրական բանը դա է, որ մենք հաշվառումն ավելի լավ վիճակում ենք դրել, որովհետև մենք այսօր վիճակագրության հետ կապված ունենք խնդիրներ, որ պետք է լուծենք: Դա գյուղատնտեսության և շինարարության հետ է կապված և ոչ թե նրանով է բացատրվում, որ իր ցուցանիշները ցածր են՝ հնարավոր մեկնաբանությունները կանխատեսելով: Այլ չհարկվող դաշտերի, ստվերը շատ եղած դաշտերի մեջ մենք հետադարձ ինդիկատորներ չունենք՝ այդ թվերի մեջ հավաստիացում ստանանք: Ինչ վերաբերում է, որ ասում եք Ռուսաստանի Դաշնության սպառողական շուկան է աճել, դրա հաշվին է, դա այդպես չէ: Ռուսաստանի Դաշնության սպառողական շուկան չի աճել, Ռուսաստանի ներսում իրենց առևտուրը և սպառումն այդքան չի աճել: ԵԱՏՄ-ն էֆեկտ ունի՞ այս ամենի մեջ՝ այո: Բայց ամփոփելով՝ մտավախություն չունեմ: Վստահ եմ, որ ճիշտ ուղղության վրա ենք:

«Հայկական ժամանակ» օրաթերթ, Հայկ Գևորգյան – Շարունակեմ: Կներեք, ուզում էի ասել, որ այս իրավիճակում, երբ որ կոնյուկտուրան աճել է, մենք ունենք ընդամենը 4.2 տոկոս աճ կամ կանխատեսում ենք ընդամենը 5 տոկոս աճ եկող տարվա համար, մի քիչ քիչ չե՞ն հավակնությունները: Այդ իմաստով էի ես հարցնում:

Վարչապետ Կարեն Կարապետյան –Տեսեք՝ մենք 2017 թվականին շատ ներուժ կամ հիմք չենք դրել 2018 թվականի աճի համար: 2018 թվականի աճը լինելու է արդյունավետության, գոյություն ունեցող կապիտալների աճի հաշվին, մարդկային ռեսուրսի աճի հաշվին, մասնավորի հաշվին, և իրականում 2018 թվականին այն, ինչ որ մենք մտադիր ենք անել, հաջորդ տարիների համար աճն է: Մենք պետք է ձեզ հետ ֆիքսենք, որ այն իրավիճակը, որը տիրել է աշխարհում, այն իրավիճակը, որը տիրել է մեր երկրում, թույլ չի տվել նախկին կառավարիչներին հաջորդ աճերի համար ներուժի բազան ստեղծել: Դա լավ կյանքից չի եղել: Եվ այդ իսկ պատճառով մենք այսօր աճը ձևակերպում ենք՝ որոշ դեպքերում սպառման պահանջարկի աճից ելնելով, քանի որ սպառողը շատ ավելի արագ է արձագանքում, քան ներդրողը: Այդ իսկ պատճառով ես համարում եմ հաջորդ տարվա 4.5 տոկոս աճը տրամաբանական: Եթե մենք 2018 թվականին ինչ -որ նախատեսում ենք անենք, բացի մեր կապիտալ ծախսերից, բիզնես միջավայրի փոփոխություն, մեր տեղական ներդրողների մոտ օպտիմիզմի և ակտիվության աշխուժացում, որը կբերի արտաքին ներդրողին, ապա մենք շատ լավ բազա, հնարավորինս լավ բազա կստեղծենք 2019 թվականի համար:

«Հանրային ռադիո» ռ/կ, Հասմիկ Դիլանյան – Պարոն վարչապետ, հաջորդ տարի մոտ 5500 պետական ապարատի աշխատող է կրճատվելու: Բյուջեն այդպես է պլանավորում: Արդյոք մեր աշխատաշուկան ունի՞ հնարավորություն այդ մարդկանց աշխատանքով ապահովելու, և սա նոր սոցիալական խնդիրներ չի՞ առաջացնի: Խնդրում եմ հստակ ծրագրեր ասեք՝ ի՞նչն ինչո՞վ է փոխարինվելու:

Վարչապետ Կարեն Կարապետյան – Եթե սոցիալական հարց եք ասում, դե եկեք պետական ապարատը 2 անգամ ավելացնենք: Կլինի՞ այդպես: Դուք բոլորդ մեզանից պահանջում եք արդյունավետ աշխատանք, պահանջում եք, որպեսզի աշխատողն իր

տեղում իր գործառույթը կատարի: 5500-ին որ կրճատում ենք, չենք կրճատում լավագույններին: Մարդ կա, որոնց կրճատելու ենք և նույնիսկ իր աշխատատեղի մասին, ճիշտ է, անհանգիստ ենք, բայց այդ խնդիրը չէ կարևորը: Դուք վաղը ասում եք՝ մենք՝ հարկ վճարողներս, ձեզ հարկ ենք տալիս, դուք վատ եք կառավարում, շատ եք ծախսում: Հենց սկսում ենք օպտիմալացնելը, ասում եք՝ սոցիալական լարվածություն: Դե եկեք բոլորին ընդունենք պետական ապարատ, կլինի՞:

«Հանրային ռադիո» ռ/կ, Հասմիկ Դիլանյան – Դրանց մեջ ծույլ պաշտոնյաները մտնո՞ւմ են, պարոն վարչապետ:

Վարչապետ Կարեն Կարապետյան – Իհարկե: Ասում են՝ ուսուցչին ո՞նց եք կրճատում: Դուք քի՞չ օրինակ գիտեք, որ ուսուցիչն ուսուցիչ չի ու ավելի լավ է՝ ինքն ուսուցիչ չլինի: Կամ բժիշկը բժիշկ չի ու լավ է՝ բժիշկ չլինի: Հենց կրճատում ենք, դուրս է գալիս՝ կիրթ, ինտելիգենտ մարդուն կրճատում ենք: Մի քիչ ավելի ռացիոնալ է պետք ամեն ինչում լինել: Պետական ապարատն ավելի մեծ է, քան պետք է լինի: Շատ կտրուկ չենք կարողանում կրճատել, որովհետև համապատասխան բեռի և համապատասխան որակավորման մարդ ընդունելն է պրոբլեմատիկ: Աշխատավարձերը պետական ապարատում բարձրացնենք կտրուկ կրճատելով՝ միանգամից կքննադատվենք, և ճիշտ կլինի: Բայց մենք պետք է ձեզ հետ հասկանանք, որ մենք լավ երկիր չենք կարող ունենալ, եթե մենք լավ կառավարում չունենանք: Դա դոգմա է, ուղղակի դոգմա: Չի կարելի մոտավորապես կառավարելով լավ արդյունք ստանալ: Մենք՝ պետությունը, իրականում մեծ գործառույթներ ունենք անելու: Ես կողմնակից եմ նրան, որ պետության հիմնական գործառույթը բիզնեսի մեջ բիզնեսին չխանգարելն է: Բայց այսօրվա իրավիճակն այնպիսինն է, որ մենք շատ դեպքերում կատալիզատորի դեր ենք կատարում բիզնեսի համար և օժանդակելու ենք: Հենց բիզնեսը գա հասնի, կայունանա, պինդ կանգնի ոտքի, այդ ժամանակ մեր գործառույթը կլինի իրենց չխանգարելը:

«CivilNet.am» լ/կ, Մկրտիչ Կարապետյան - Պարոն վարչապետ, ես ուզում եմ հարցնել՝ ե՞րբ է Հայաստանում նոր ատոմակայան կառուցվելու, ու հիմա Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծին որպես այլընտրանք դիտվում էր Հայաստան-Իրան երկաթուղին: Անցյալ տարի կամ այս տարվա սկիզբ լուծարվեց մի ՓԲԸ, որն, ըստ էության, հանձն էր առել այս շինարարությունն անելը: Պետք է խնդրեմ այս հարցերին պատասխանել:

Վարչապետ Կարեն Կարապետյան – Պայմանավորվել ենք մի հարց, մի հարցի մեջ փորձեցիք երկու հարց տալ: Ատոմակայանը երկարաձգել ենք մինչև 2027 թվականը: Հստակ իմացեք, որ մեր տրամադրությունն է, որովհետև մենք ունենք շատ մեծ ռեսուրս և ներուժ. դա ատոմային էներգետիկայի կադրերն են: Այսօր իրավիճակն էներգետիկայում այնպիսինն է, որ փող ունենալը, ինվեստիցիա ունենալը դեռ չի նշանակում, որ դու կունենաս ատոմային էներգետիկա: Այդ իսկ պատճառով մենք այս պահին երկարաձգում ենք մինչև 2027 թիվը, անվտանգության խնդիրը մեզ համար չափազանց կարևոր է, և մենք մտադիր ենք ատոմային էներգետիկա միշտ ունենալ:

«Առավոտ» օրաթերթ, Լուսինե Բուդաղյան – Պարոն վարչապետ, նորից պետք է անդրադառնամ Doing Business-ին: Գիտենք բոլորս, որ ներդրումները հոսում են այն երկիր, որտեղ տնտեսական բարենպաստ միջավայր է: 9 կետով հետընթաց ենք արձանագրել: Ասում եք՝ Հայաստանի զարգացման հիմնադրամի միջնորդները, որոնք պիտի աշխատեն տարբեր երկրներում: Doing Business-ը միջազգային ներդրողների համար հատկապես շատ կարևոր բան է, որին իրենք ուշադրություն են դարձնում: Ինչպե՞ս ենք համոզելու, որ ներդրումներ գան մեր երկիր:

Վարչապետ Կարեն Կարապետյան – Տեսեք՝ իրականում Doing Business-ը հետաքրքիր և չափազանց կարևոր է մեզ համար, որպեսզի մենք այնտեղ ունենանք առաջընթաց: Բայց համեմատության համար եմ ասում. Doing Business-ով մենք ու Բելգիան մոտավորապես

իրար կողքի ենք՝ Բելգիայում ներդրում չե՞ն անում: Այդ իսկ պատճառով ես ձեզ առաջարկում եմ մենք դրան շատ պրագմատիկ և ռացիոնալ մոտենանք: Մենք այդ հարցում հետևողական ենք լինելու, որպեսզի այս ինդիկատորն էլ լավանա: Մենք տնտեսական ազատությունների ինդեքսով 55-ից 34-ն ենք հասել, մրցակցության մասով 79-ից 73-ն ենք հասել: Մենք համոզված ենք, որ բիզնես միջավայրը Հայաստանում բարելավվում է, բայց մենք նաև ընդունում ենք, որ մենք նեղ տեղեր ունենք, որի վրա պետք է միանշանակ աշխատենք: Սա է: Ռեգուլյար աշխատենք, հետևողական աշխատենք, որպեսզի այս մասով էլ այդ արձագանքը, այդ ազդակը, որը գնում է, լինի ի նպաստ մեզ:

«Առավոտ» օրաթերթ, Լուսինե Բուդաղյան – Պարոն վարչապետ, դատական համակարգը թույլ կետ նշեցիք: Ի՞նչ ենք անում:

Վարչապետ Կարեն Կարապետյան – Մենք ձեզ ներկայացրել ենք՝ ինչ ենք անում և ինչ ենք անելու: Շատ բան ունենք անելու: Իրականում 1.7 տարի ժամկետը դատարանների հերթի սպասման, հետաձգման, և այս պահին արդարադատության նախարարությունն աշխատում է այն համալիր ծրագրի վրա, որով մենք այդ համակարգում պետք է փոփոխություններ անենք:

«Հրապարակ» օրաթերթ, Վահե Մակարյան – Պարոն վարչապետ, իհարկե, Ձեզ ուղղվող հարցերը շատ են՝ թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական բնույթի: Բայց ուզում եմ մի փոքր անձնական, ավելի ճիշտ՝ Ձեր առանձնատան վերաբերյալ հարց ուղղել և առհասարակ կանաչ գոտիների վերաբերյալ Հայաստանում, Երևանում: Մենք գիտենք, որ բազմաթիվ շքեղ առանձնատներ են կառուցվել նույն Մոնումենտի այգու հարակից տարածքում և ոչ միայն՝ կանաչ գոտիների, ծառահատելու հաշվին: Այդտեղ նշվում էր նաև Ձեր առանձնատան գոյության մասին, Զարուհի Փոստանջյանն էր տեսանկարահանում արել: Եթե չեմ սխալվում, պարզաբանել եք, որ դա Ձեր եղբորն է: Խնդրում եմ հստակեցնել՝ նախ ինչպե՞ս եք վերաբերվում այն փաստին, որ ծառեր հատելով առանձնատուն են կառուցում, և Ձեր եղբայրը ևս առանձնատուն ունի այդ տարածքում, և որտե՞ղ եք Դուք բնակվում, քանի որ մի քանի բնակարանների մասին է խոսվում անընդհատ: Խնդրում եմ նաև դա հստակեցնել:

Վարչապետ Կարեն Կարապետյան – Ես ասել եմ՝ եղբայրս է գնել, բայց չեմ ասել՝ դա իմս չէ հենց հատուկ նրա համար, որ չասեն եղբոր վրա է գրել: Գնել է եղբայրս 2011 թվականին: Գնել է Կանադայի, Ամերիկայի քաղաքացուց և մի ինչ-որ Սփյուռքյան կազմակերպությունից: Երբ գնել ենք, այնտեղ անտառ չի եղել: Դա կառուցվել է 2014 թվականին: Շատ վատ եմ վերաբերվում անտառների կտրելուն, բայց երկրորդական շուկայից գնման պահին այնտեղ անտառ չի եղել: Ավելին, ես ինքս այդտեղ եմ մեծացել և այդ անտառը նախկինում շատ-շատ լավ հիշում եմ: Հիմա ինձ կարող եք մեղադրել, որ երկրորդական շուկայում ինչու ես առել. անտառ չկար, արդեն վաճառված էր, այլ սեփականատեր կար:

«Հրապարակ» օրաթերթ, Վահե Մակարյան – Իսկ Դուք որտե՞ղ եք բնակվում, պարոն վարչապետ: Խոսում են պարիսպների մասին, որ մեծ պարիսպներ են կառուցվում Ձեր տան շուրջը և փակում են արտաքին աշխարհի հետ կապը:

Վարչապետ Կարեն Կարապետյան – Այդտեղ չեմ բնակվում: Իմ տանը: Ես բնակվել եմ այնտեղ, բնակվում եմ բավական երկար ժամանակ: Որոշ ժամանակ անց բազմահարկ շենք են կառուցում իմ հարևանությամբ, և այդ բազմահարկ շենքից իմ բակն առ այսօր ամբողջությամբ երևում է: Պարիսպներ են կառուցել՝ ընդամենը միջավայր ենք փորձել ստեղծել, որ երբ դուրս ես գալիս բակ, բոլորի աչքի առաջ չլինես: Հնարավո՞ր է դա անել, թե՞ ոչ: Ես չէի կարող քաղաքապետարանին խնդրել, որ գիտեք ինչ, իմ սեփականության,

տան հարևանությամբ բազմահարկ շենքեր մի թույլատրեք, որ վաղը, մյուս օրը բոլորն իմ բակը չնայեն: Եվ այսօր այդպես է դա:

«Արմենպրես» լրատվական գործակալություն, Անի Նազարյան- պարոն վարչապետ, արդեն մոտ երեք տարի է, ինչ անդամակցում ենք Եվրասիական տնտեսական միությանը: Ցանկանում եմ լսել Ձեր գնահատականն այս միությանն անդամակցելուց Հայաստանի տնտեսական շահի մասին: Մաքսատուրքերի առումով որքան է Հայաստանի մասնաբաժինը, եթե ունեք այդպիսի թվեր:

Վարչապետ Կարեն Կարապետյան- Մենք ԵԱՏՄ-ի հետ կապված բազմիցս ներկայացրել ենք, թե ինչ ենք շահում, հիմա եկեք ես մի փոքր Հայաստանի մասին պատմեմ: Մենք հանդիսանում ենք ԵԱՏՄ հինգ երկրների ակումբի անդամ, որի արդյունքում հնարավորություն ունենք 180 միլիոնանոց շուկա մտնել որոշակի հեշտացված ռեժիմով: Եվ հիմնական արտադրանքի, ծառայությունների, որ ունենք մեր երկրում, սպառողն այդ շուկաներում է: Վիճակագրությամբ ներկայացրել ենք այն թվերը, թե ինչ աճ ունենք այնտեղ: Բացի դրանից, մենք հետխորհրդային տարածքում միակ երկիրն ենք, որը լինելով ԵԱՏՄ, ԱՊՀ անդամ, ունենք GSP+ ռեժիմ Եվրամիության հետ, GSP ռեժիմ Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ, որը մեկ միլիարդանոց շուկա է: Ավելին, նոյեմբերի վերջին արդեն կմեկնարկենք ազատ տնտեսական գոտին մեր հարևան, բարեկամ Իրանի հետ, որտեղ նույնպես մեծ՝ 82,5 միլիոնանոց շուկա է: Այսօր մեր բոլոր հնարավոր ներդրողների և գործընկերների հետ բանակցելու ժամանակ ասում ենք՝ դուք երբ գալիս եք Հայաստան՝ մի եկեք որպես 3 միլիոնանոց շուկա, այլ եկեք մի տարածք, մի երկիր, որտեղ մենք ձեզ համար մաքսիմալ ապահովելու ենք բիզնես միջավայր, անվտանգություն և այլն, որտեղ կախված ձեր հետաքրքրություններից կարող եք մտնել ԵԱՏՄ, կարող եք մտնել Եվրամիություն, կարող եք մտնել Միացյալ Նահանգներ, կարող եք մտնել Իրանի Իսլամական Հանրապետություն: Ինչ վերաբերում է ԵԱՏՄ-ից մեր մաքսատուրքերին և այլնին՝ ես այս պահին վիճակագրությունը չեմ հիշում, Ձեզ կներկայացնենք, այն Ձեզ համար գոհացուցիչ կլինի:

«Միր» հ/ը, Իրինա Մկրտչյան- Ցանկանում եմ իմանալ, թե անձամբ Դուք ինչպես եք գնահատում մեր ձեռնարկատերերի կողմից արտադրվող ապրանքներն ու մատուցվող ծառայությունները: Երբ նրանց ներկայացնում ես ինչ -որ հարցեր՝ նրանք ասում են, որ իրենց պետք է արդիականացում և էժան փողեր: Հնարավո՞ր է նրանք օգնություն են սպասում պետությունից, ի՞նչ եք կարծում:

Վարչապետ Կարեն Կարապետյան- Նախևառաջ ծառայությունների որակը կտրուկ կարող է բարձրանալ, երբ մրցակցություն կա, և իրականում մենք տեսնում ենք, որ ծառայությունների որակը բարձրանում է: Նույն սիրիահայերի գալով մենք բոլորս ականատես ենք, որ ռեստորանային և սպասարկման բիզնեսները Հայաստանում կտրուկ փոխվել են: Օր ու գիշեր աշխատող մարդիկ են, որոշակի մշակույթ ունեն և այլն: Ինչ վերաբերում է էժան միջոցներ տրամադրելուն, ապա մենք այդ գործիքակազմից օգտնվում ենք՝ գյուղատնտեսությունն ասացինք, թեթև արդյունաբերությունն ասացինք, մարզային ծրագրերը ձեզ ներկայացրել ենք: Այդտեղ աջակից ենք լինում մաքսիմալ, որքան մեր ուժը ներում է: Բայց միանշանակ այդտեղ ունենալու ենք որակի աճ, հակառակ դեպքում իրենց մոտ ուղղակի բիզնեսը չի կայանա:

«Հայկական երկրորդ հեռուստաալիք», Արփինե Թամրազյան- Գործընկերոջս հարցն եմ ցանկանում կրկնել՝ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու վերաբերյալ: Արդյոք կառավարությունը դիտարկում է այդ հնարավորությունից օգտվելու տարբերակ և ի՞նչ նորություն ունենք Իրան-Հայաստան երկաթգծի կառուցման նախագծի հետ կապված:

Վարչապետ Կարեն Կարապետյան- Տեսեք, Իրան-Հայաստան երկաթգիծը կկառուցվի թե չի կառուցվի՝ դա պետք է դնել կշեռքին և հաշվարկել, եթե երկաթգիծը կառուցվի՝ ծառայության ինչպիսի գին կլինի, ինչ ծավալով մենք կարող ենք այնտեղ ծառայություն մատուցել և եթե, օրինակի համար, լինի ավտոճանապարհ՝ թունելով ծառայության գինն ինչպիսին կլինի, քանի որ դա պետք է լինի բիզնեսի առումով տրամաբանական, որ փոխադրողն այլ ճանապարհ ընտրի: Համաձա՞յն եք: Ինքնանպատակ չէ դա: Այդ իսկ պատճառով Իրանի հետ մեր համագործակցությունը, հոսքերի ավելացումը, Հյուսիս-հարավը, ազատ տնտեսական գոտին… Երբ այդ ինդիկատորները հայտնվեն և մենք կարողանանք այդ շուկան ապահովել, մենք կքննարկենք՝ դա կլինի երկաթգիծ, թե՞ այլ ճանապարհ:

Ինչ վերաբերում է Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծին, կօգտվեն թե չենք օգտվի՝ կախված է նրանից, թե ինչ առաջարկ իրենք կներկայացնեն: Եթե այդ ճանապարհից օգտվելով ապրանքը Հայաստան բերելը բիզնեսմենին ձեռնտու լինի՝ իհարկե կօգտվի, ձեռնտու չի լինի՝ չի օգտվի:

«Առկա» լ/գ, Ինեսա Վերլինսկայա- Ցանկանում եմ ճշտել, արդյոք կան արդեն նախատեսված ներդրումային ծրագրեր հաջորդ տարվա համար և դրանցում որոնք են լինելու ամենախոշորները և որ ոլորտներում: Եվ Հայաստանից դեպի Ռուսաստան այլընտրանքային ինչ-որ ճանապարհների ծրագիր նախատեսվելու է, թե ոչ:

Վարչապետ Կարեն Կարապետյան- Ներդրումային ծրագրեր իհարկե կան, որոշակի ծրագրերի անունը դուք լսել եք, Շնող հէկ, մոտ ժամանակներս կլսեք՝ Նոյլենդ, Հայկական գյուղ, Սևան ազգային պարկ և այլն: Պարբերաբար մենք ձեզ կտեղեկացնենք: Հարցի հաջորդ մասի հետ կապված՝ մենք բանակցում ենք բոլոր շահագրգիռ կողմերի հետ:

«Ժողովուրդ» օրաթերթ, Արման Գալոյան- Պարոն վարչապետ, Դուք նոր ներկայացրեցիք տնտեսական ցուցանիշներ, նաև չհամաձայնեցիք գործընկերներիցս մեկի դիտարկմանը, թե ժողովրդի սոցիալական վիճակը վատացել է: Բայց այսպիսի մի բան՝ ձեր կոալիցիոն գործընկեր Դաշնակցության բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը ՀՅԴ բյուրոյի գերագույն մարմնի նիստի ժամանակ ելույթ է ունեցել՝ հայտարարելով, որ երկրում առկա սոցիալ-տնտեսական վիճակը դեռևս բեկումնային փոփոխության չի ենթարկվել, նաև խոսել է սոցիալական վիճակի բարելավման, գնաճի մասին և այլն: Ի՞նչ է սա, կոալիցիոն գործընկերոջ կողմից պատասխանատվության բեռն իշխող մեծամասնության վրա նորից բարդելու փորձ, թե՞ ներիշխանական հակասություններ:

Վարչապետ Կարեն Կարապետյան- Ես ու Հրանտ Մարգարյանը տարբեր բաներ չենք ասել: Ես ասել եմ սոցիալական վիճակը չի վատացել, ինքն ասել է բեկումնային փոփոխություն չի եղել: Դուք ո՞ր տեղ եք տեսնում հակասություն:

«Aysor.am», Անի Վարդանյան- Պարոն վարչապետ, կխնդրեմ ներկայացնել կառավարության գլխավոր ձեռքբերումը և ձախողումը: Նաև դուք քարոզարշավի ընթացքում Սյունիքում հայտարարում էիք, որ «աշխարհը շուռ եք տալու»: Այս մեկ տարում որքանո՞վ հաջողվեց աշխարհը շուռ տալ:

Վարչապետ Կարեն Կարապետյան- Ես ասել եմ մի՞ տարվա մեջ ենք «աշխարհը շուռ տալու»: Հիմա էլ եմ հայտարարում՝ աշխարհը շուռ ենք տալու, ունենալու ենք լավ երկիր: Ունենք բազմաթիվ հաջողություններ, բազմաթիվ անհաջողություններ: Անհաջողություններն ավելի քիչ, քան հաջողությունները: Կներեք այսպիսի անհամեստ պատասխանի համար:

«Նովոյե Վրեմյա», Թամարա Հովնաթանյան- Հարցս վերաբերում է 2018-ի բյուջեին: Այն որոշ փորձագետների կողմից գնահատվեց քիչ լավատեսական, ինչպես կնկարագրեք Դուք այդ փաստաթուղթը:

Վարչապետ Կարեն Կարապետյան- Տեսեք, թվերի հետ աշխատելուց մեկնաբանելու շատ հնարավորություն չկա, ո՞վ ինչ է ուզում տեսնել բյուջեի մեջ: Եթե մենք ուզում ենք աշխատավարձի նվազագույն շեմի, թոշակի բարձրացում, ապա այնտեղ դա չկա: Բայց մենք առաջին անգամ հայտարարում ենք և կապիտալ ծախսերի առումով կրկնակի ենք բարձրացնում 2017 և 2018 թվականների թիվը՝ սկզբունքորեն: Ես կարծում եմ, որ այսօրվա կառավարությունն այդ առումով շատ քիչ պոպուլիստական բաներ է անում, և քայլեր ենք ձեռնարկում երկարատև կայուն աճի համար: Եթե մենք ուզում ենք աճ ունենալ, ապա դա միայն մեր կապիտալ ծախսերով չէ պայմանավորված, դա, իհարկե, և մասնավորն է, և այլն, և այլն: Բայց այսօր այդ առումով մենք որոշակի կատալիզատորի խնդիր պետք է ունենանք և, ելնելով դրանից, 2018 թվականի բյուջեն ես համարում եմ մեր իրավիճակից, մեր կարողությունից ելնելով հնարավորինս լավագույնը, որը հաջորդ տարիների տնտեսական աճի համար կունենա ներուժ: Այսինքն, 2018 թվականի բյուջեն ներկայացնելու ժամանակ մենք մի փոքր ավելի հեռու ենք նայել: Ընդ որում, ֆիքսենք, որ 2017-ին 2018-ի աճն ապահովելու համար մենք բավարար քայլ չենք արել, չենք արել ոչ թե չէինք գիտակցում, այլ դրա հնարավորությունը չունեինք:

Գյումրիի «Ցայգ» հ/ը, Նազելի Բաղդասարյան- Պարոն վարչապետ, վերջերս Ձեր ներկայությամբ բացվեց Գյումրու կենտրոնական փողոցներից մեկը՝ Ռուսթավելի փողոցը, դա Ձեր խոստացած Գյումրու կենտրոնի վերակառուցման և վերականգնման ծրագրի շրջանակում է: Ուզում եմ հարցնել, թե արդյոք հետևողական եք լինելու և արդյոք շարունակվելու են ներդրումային ծրագրերը Գյումրիում, որոնք խթան կհանդիսանան քաղաքի զարգացման համար:

Վարչապետ Կարեն Կարապետյան- Այո, շարունակական են լինելու, շաբաթ օրը հանդիպում ենք Կումայրիի ֆոնդով, երկուշաբթի օրը հանդիպում ենք, որպեսզի Շիրազի փողոցը և մյուս հարակից փողոցները, որոնք առնչվելու են հրապարակի և Բարեկամության այգու հետ, քննարկենք: Այնտեղ իրականում շատ մեծ ներուժ եմ տեսնում: Իրականում չափազանց հետաքրքիր, շատ յուրահատուկ ճարտարապետություն ունի, շարունակական է լինելու, անելու ենք, տեսնելու եք, լավ է լինելու:

«Շանթ» հ/ը, Արտակ Հովհաննիսյան- Պարոն վարչապետ, հարցս օտարերկրյա ներդրումների մասին է, Ձեր տված տեղեկանքում 36 տոկոս աճ կա, արդյոք ավելացել է նաև ներդրող երկրների թիվը, որովհետև նշված է ընդամենը 10 երկիր, թե փոքրները չեք նշել: Այդ երկրների ցանկում մի հետաքրքիր անուն կա՝ Ջերսի, շատ փոքր կղզի է, 100 հազար բնակչությամբ, Երևանի կես տարածքով: Ջերսիին Հայաստանն ինչով է հետաքրքրել, որ 65 մլն ներդրում ունի:

Վարչապետ Կարեն Կարապետյան- Աշխարհագրությունն աճել է, թե ոչ՝ չգիտեմ, կներկայացնենք: Օտարերկրյա ներդրումների աճն այս պահին ես կո՞ւզենայի ավելի մեծ լիներ՝ այո, իրատեսական եմ համարո՞ւմ՝ քիչ հավանական, որովհետև, ինչպես ասացի, այսօր մեր տնտեսությունը թափ հավաքող տնտեսություն է, որտեղ, բացի բիզնես միջավայրից, չափազանց կարևոր է սեփական՝ ներքին ներդրողին ակտիվացնելը: 2018 թվականին և հաջորդ տարիներին ես իրականում սպասում եմ օտարերկրյա ներդրումների աճ, ռեգուլյար, կայուն աճ, իսկ վիճակագրության տվյալները, եթե Դուք մանրամասն ցանկանում եք, մենք Ձեզ կտրամադրենք:

«Hetq.am»,Սեդա Հերգնյան- Պարոն վարչապետ, մեր տնտեսությունը չափազանց մեծ կախվածություն ունի պղնձի միջազգային գներից՝ ուղղակի կախվածություն, և անուղղակի կախվածություն՝ նավթի գներից: Հիմա եկեք պատկերացնենք, որ հաջորդ տարի երաշխավորված չէ, որ այդ գները կլինեն կայուն կամ կաճեն: Պատկերացնենք, թե

նվազում են՝ մենք կկարողանա՞նք մեր ունեցած միջոցներով, ներքին ռեսուրսներով տնտեսական աճ ապահովել, այն ցուցանիշով, որով նախատեսում ենք:

Վարչապետ Կարեն Կարապետյան- Տեսեք, մենք ձեզ մանրամասն ներկայացրել ենք որքան է պղինձը մեր աճի մեջ, ինչքան է ծառայությունը, ինչքան գյուղատնտեսությունը: Մեր նպատակն է մաքսիմալ դիվերսիֆիկացնել մեր տնտեսությունը, մենք ընտրել ենք 6-7 ճյուղ, որով համարում ենք, որ կլինի զարգացում: Մենք այսօր ունենք այդ հնարավորությունը՝ շատ քիչ հնարավորությունից սեփական ռեսուրսներով: Եթե պղինձը չլիներ՝ չէի՞նք ապրելու՝ ապրելու ենք, կարող է մի փոքր էլ այլ ուղղությամբ գնալ: Բայց եթե դա ունենք՝ չօգտագործե՞նք: Դուք անհանգիստ եք դրանից, բայց դուք պատկերացնո՞ւմ եք այն երկրները, որոնք միայն նավթի ու գազի վրա են նստած: Ունենք այն, ինչ ունենք: Այդ իսկ պատճառով էլ դիվերսիֆիկացնում ենք:

«168 Ժամ», Բաբկեն Թունյան- Հարցը մի փոքր կարող է տարօրինակ, էգոիստական հնչել: Դուք միշտ կարևորում եք տնտեսական լրագրության դերը ու նեղսրտում եք, որ լրագրողները Ձեզ մասնագիտական հարցեր չեն տալիս, մյուս կողմից Դուք հարցազրույց եք տալիս հիմնականում դրսի ԶԼՄ-ներին՝ Bloomberg, Reuters, Ավստրիայի հանրային ռադիո: Նկատի ունեմ հարցազրույցային ֆորմատ, որովհետև ասուլիսը թույլ չի տալիս թեման զարգացնել, ու շատ հարցեր Ձեր պատասխաններից են ծնվում:

Վարչապետ Կարեն Կարապետյան- Պայմանավորվում եք, որ հանդիպենք: Արամի հետ խոսեք:

«168 Ժամ», Բաբկեն Թունյան- Ես սա ասում եմ մեր լրագրողների ներկայությամբ ու պարտավորվում, եթե ինձ հարցազրույց տաք, հավաստիացնում եմ, որ որակը տեղը կլինի ու դա կլինի ոչ թե հեղինակային, այլ բաց տարածման համար: Եթե թույլ տաք՝ մի հարց էլ *Doing* Business-ի մասին: Մեր միավորը *Doing* Business-ում աճել է, բայց մեր տեղը հետ է գնացել, որովհետև, ինչպես նշեցիք, մյուսները մեզնից առաջ են անցել: Եթե մեր՝ ետ ու առաջ գնալն այդ զեկույցում պայմանավորված է ոչ միայն մեզնով, այլ ուրիշների շարժով՝ իմաստ ունի՞ արդյոք կառավարության ծրագրերում կոնկրետ ինչ-որ նշաձողեր սահմանելը՝ 4 հորիզոնականով առաջ կկգնանք, 5 կամ լավագույն 20-ի մեջ կհայտնվենք:

Վարչապետ Կարեն Կարապետյան- Ճիշտ հարց ես տալիս: Դա մենք հատուկ ենք արել: Եթե նկատել եք, 100 օրվա հաշվետվությունը մենք ձեզ ներկայացրել ենք գրավոր, մեկ տարվա հաշվետվությունը ներկայացրել ենք գրավոր: Այսօր ասուլիսի ժամանակ մաքսիմալ ձեզ նյութ ենք տրամադրում, որպեսզի ինքներս հետագայում չասենք՝ գիտեք մեր խոսքը ճիշտ չեք հասկացել, ճիշտ չեք մեկնաբանել, և եթե լինի քննադատություն կամ առաջարկություն՝ լինի առարկայական: Շատ ճիշտ հարց ես տալիս, *Doing* Business-ով երկրներ կան, որոնք որ ցուցանիշով մեզնից հետ են, բայց կյանքի որակով մեզնից առաջ են: Դա կատաստրոֆա՞ է՝ ոչ, ինչի՞ ենք մենք թիվ դրել՝ որպեսզի պարտավորվածություն զգանք: Վաղը մյուս օր այդ թվին չհասնենք՝ դուրս կգանք հանրությանը կասենք, թե ինչն է դրա պատճառը: Իսկ եթե այդ թվին չհասնենք, բայց դուք բոլորդ զգաք, որ մենք ավելի զարգացող, ավելի կյանքը լավացող երկրում ենք ապրում, կարծում եմ, մեզ շատ չեք քննադատի, որ մենք էն երրորդը չենք, էն պլյուս մեկ երրորդն ենք: Դա զուտ թիմը ձգելու, տոնուսի մեջ պահելու համար է:

«Ֆորտունա» Լոռու մարզային հ/ը, Անահիտ Կարապետյան- Պարոն վարչապետ, Ձեր պաշտոնավարման մեկ տարվա ընթացքում հասցրել եք երեք անգամ լինել Լոռու մարզում, որից երկուսը՝ միայն վերջին ամսին: Ձեր հետաքրքրվածությունը մարզի նկատմամբ ոնց կբացատրեք և շատ է խոսվում Վանաձորի ներդրումային միջավայրի մասին, ի վերջո՝ ի՞նչ սպասենք:

Վարչապետ Կարեն Կարապետյան- Լավ եմ վերաբերվում Լոռու մարզին, շատ, սիրում եմ Լոռու մարզը, ինչպես բոլոր մնացած մեր մարզերը: Վանաձորը մեծ ներուժ ունի, շատ

բան ունենք այնտեղ անելու, իտալացի մասնագետների ենք հրավիրել, մեր զբոսաշրջությամբ զբաղվողներին: Վերջերս ներդրումային մեծ ծրագիր ենք սկսել 100 մլն դոլարանոց՝ արդյունաբերական և գյուղատնտեսական: Այս պահին քննարկում ենք, թե պետությունը և համայնքը ինչպիսի գործառույթներ, ենթակառուցվածքային լուծումներ պետք է վերցնեն իրենց վրա, որպեսզի միջավայր ստեղծենք, որ բիզնեսը գա այնտեղ: Այս պահին մենք քննարկում ենք բազմաթիվ ծրագրեր: Ընդհանրապես ես նաև ուզում եմ ձեզ տեղյակ պահել, օրինակ տեսեք, «Հայկական գյուղ» կամ «Նոյ լենդը», մենք մեկ տարի է դրա վրա աշխատում ենք: Այսօր մենք վարձել ենք այդ ոլորտի 4 լավագույն կանսուլտատներին, որպեսզի պատկերացնենք ովքեր են՝ մեկը Յունիվերսալն է, մեկը՝ Դիսնեյլենդը, որպեսզի զոնինգ անենք: Կոնցեպցիայի համար իրենք ուզում են երեք ամիս, դրանից հետո ուզում են նախագծի համար՝ երեք ամիս: Այս պահին մենք աշխատում ենք Վանաձորի զոնինիգի վրա, թե ինչ բովանդակություն դնենք, որպեսզի Վանաձորն ունենա հետաքրքիր զարգացում, իսկ այդ քաղաքն իրականում մեծ ներուժ ունի:

«Հայոց աշխարհ» օրաթերթ, Լիլիթ Պողոսյան- Հարցս մի քիչ քաղաքական ոլորտից է: Իրենց արևմտամետ համարող լրատվամիջոցներում այսպիսի մի հստակ գիծ է ուրվագծվում՝ Դուք ընդգծված ռուսամետ կողմնորոշում ունեք, արևմուտքում Ձեզ չեն ընդունում: Նույնիսկ այսպիսի վարկած դրվեց շրջանառության մեջ, որ Եվրամիության հետ համաձայնագրի ստորագրումը կարող է հետաձգվել այն նկատառումով, որ հավաստիանան, որ Դուք, անուղղակիորեն անդրադառնում են 18 թվին, վարչապետ չեք լինի, հետո նոր այդ հարցը լուծեն: Ինչ կասեք այս մասին, այստեղ առհասարակ տրամաբանություն կա՞, թե՞ ոչ:

Վարչապետ Կարեն Կարապետյան -Ոչ մի բան, ի՞նչ ասեմ: Ինչ վերաբերում է արևմտամետ, ռուսամետ և այլն, պատասխանն ակնկալում եք ինչպիսին է: Եվ մենք այսօր մեր արևմտյան գործընկերների հետ ունենք չափազանց բաց, շատ կոնստրուկտիվ աշխատանքային հանդիպումներ: Եվ ԵՄ դեսպանների, և ԱՄՆ դեսպանի հետ, և Մեծ Բրիտանիայի դեսպանի հետ մենք իրականում շատ բաց ենք խոսում, թե մեր պրոբլեմների մասին, թե… Ինչ վերաբերում է եվրո, արևմուտքի հետ… չգիտեմ, կարծեմ արդեն մամուլում կար … մենք ստացել ենք հրավեր Դավոսում մասնակցելու և այնտեղ մեր արևմտամետ ընկերներին ներկայացնելու ենք, թե ինչպիսին ենք պատկերացնում Հայաստանը: Իսկ ինչ վերաբերում է համաձայնագիրը ստորագրվելու մասին մեկնաբանությանը, ապա ես, ճիշտ ասած, այնքան բան եմ մեկ-մեկ հանդիպում, որ յուրաքանչյուրը մեկնաբանելու անհրաժեշտությունը չկա: Զարմանում ես հնարավոր ֆանտազիաների վրա:

Հարգելի գործընկերներ, հարգելի լրագրողներ բոլորիդ ցանկանում եմ լավ տրամադրություն: Շատ եմ ցանկանում, որպեսզի դուք մաքսիմալ ուշադիր լինեք մեր ծրագրերին և մեզ առաջարկություններ տաք: Մենք իրականում քննադատությունից չենք վախենում: Եվս մեկ անգամ հայտարարում ենք, որ ինչ- որ ասում ենք՝ թղթի վրա ենք ասում, որ վաղը մյուս օրը չկարողանաք մեկնաբանել, թե ճիշտ չեք հասկացել … Չափազանց շահագրգռված եմ, որ մեր տնտեսական, տնտեսագիտական լրագրությունը, լրագրողներն իրենց պրոֆեսիոնալ մակարդակը բարձրացնեն: Իրականում դա չի նշանակում, որ մենք պրոֆեսիոնալ ենք, դուք՝ չէ: Մենք էլ պետք է մեզ վրա աշխատենք, մարզպետները, բոլոր կառավարիչները: Այսօրվա աշխարհի թելադրանքն է այդպիսին… եթե մեկ օր դու ինքդ քո վրա չես աշխատում, ապա որոշ ժամանակ հետո դու ակտուալ չես, ժամանակակից չես: Ձեզ լավ տրամադրություն, խնդրում եմ քննադատեք մեզ առարկայական, պիտակներ մի կպցրեք, ընտանիքի անդամների մի ներգրավեք, անձնականին մի կպեք: